19.02.2020թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՈՐՈՇՈՒՄ թիվ** 006198 **/20**
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ն. Ավանեսյանս, ուսումնասիրելով 19.02.2020թ. թիվ 6198 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 6198 գործը և կից նյութերը,

**ՊԱՐԶԵՑԻ**

«Զանգակ-97» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00830786) հարկային պարտավորությունները 24.12.2019թ-ի դրությամբ կազմել են 359752 դրամ, որից 358676 դրամ գումարն առաջացել է 2019թ-ի 4-րդ եռամսյակի շահութահարկի կանխավճարից: Նշված պարտավորությունը «Զանգակ-97» ՍՊԸ -ի տնօրեն Սոկրատ Մկրտչյանի կողմից ՀՀ Հարկային օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի վճարվել, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի $170^3$ հոդվածով:

Պատշաճ ծանուցված լինելով արձանագրության կազմման, գործի քննության վայրի և ժամանակի մասին՝ ակտի հասցեատերը չի ներկայացել: Գործում առկա չէ առարկություն կամ բացատրություն:

Սոկրատ Մկրտչյանը վերջին մեկ տարվա ընթացքում ենթարկվել է վարչական պատասխանատվության (19.08.2019թ-ի թիվ 021219/20 որոշում), ինչը սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 34-րդ, $244^2$, 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի $170^3$ հոդվածի՝ Սոկրատ Մկրտչյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 20.000 դրամի չափով:

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ**
**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **Ն. ԱՎԱՆԵՍՅԱՆ**

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝
Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այդ պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչականտ ույժ (հոդված 40)
Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն հանձնելու օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բացթողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական **հետևյալ հաշվեհամարին՝ 900005240487, վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:**
Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանք ընշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ստացա որոշման պատճենը_____